



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱ-ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԹԱՆԿԱՐԺԵՔ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

«ԳԻՐԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱՌԱՏՈՅ»

Լևոն Բ-ի թագադրությամբ, որը տեղի ունեցավ 1198 թվականին, մի նոր դարաշրջան բացվեց Կիլիկյան Հայաստանի արտաքին-քաղաքական և ներքին-հասարակական կյանքի պատմության մեջ: Մինչև այդ՝ հայ պետականությունը, գտնվելով Բյուզանդիոնի գերիշխանության տակ, այսպես թե այնպես ենթակա էր նրա քաղաքական ճնշմանը, որին հակադրվելու միջոցներից մեկը և գլխավորը քաղկեդոնական գաղափարախոսության դեմ տարվող անստեղծադի պայքարն էր:

1198 թվականից հետո բյուզանդական գերիշխանությունը փաստորեն վերանում էր Կիլիկյան Հայաստանից նրանով, որ Լևոն Բ իշխանը, Հռոմի պապի և Հռոմեական (գերմանական) կայսրության պատվիրակի ձեռքով արքայական թագ և օծում ստանալիս, հանդիսավորապես հանձնառու էր լինում ենթարկվել հռոմեական եկեղեցու տրամադրություններին, իսկ դրանով Կիլիկիայում բյուզանդական գերիշխանությանը փոխարինելու հավակնությամբ հրապարակ էր գալիս լատինական Արևմուտքը՝ հանձին հռոմեական եկեղեցու, որն, այնուհետև, ԺԳ և ԺԻ դարերի ընթացքում աշխատում էր իր ազդեցությունն ամրապնդել երկրում, թելադրող դեր ունենալ նրա ինչպես արտաքին, այնպես էլ ներքին կյանքի հարաբերություններում:

Այս իրադրությամբ, սակայն, Կիլիկյան հայ հասարակայնության գաղափարական պայքարը չէր դադարում և նրա էությունն ու բնույթը չէին փոխվում, որովհետև ինչպես անցյալում Բյուզանդիոնը, նույնպես և այժմ Հռոմը իր ազդեցության տարածումը կատարում էր նույն գաղափարախոսության ներթափանցման միջոցով: Բյուզանդիոնն ու Հռոմը քաղկեդոնյան միևնույն

դավանության երկու հեմարաններն էին, ուստի և մղվող պայքարի միայն ճակատն էր փոխվում:

Քաղկեդոնականության այս նոր արշավանքն, ուրեմն, կրում էր լատինականության դրոշմը: Նրան դիմագրավելու համար Կիլիկիայում նոր թափով վերակազմվում էր հակաքաղկեդոնական շարժումը՝ մաքառողական պայքարի հրավիրելով գիտակից ուժերին ընդդեմ այն տարրերի, որոնք սկսել էին տատանվել այս ընդհանուր դրության մեջ: Այս շարժմանն ու պայքարին գաղափարական ղեկավարություն ցույց տալու համար 1205 թվականին հրապարակվեց «Արմատ հաւատոյ» անունը, կրճատ ձևով՝ կրում էր «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ» անունը, կրճատ ձևով՝ «Արմատ հաւատոյ» կամ «Հաւատարմատ»: Ինչպես ասվում էր նրա ներածական գլխում՝ այս գիրքը հանդիսանալու էր «առ ձեռն պատրաստ գէն»՝ քաղկեդոնական մտայնության ծավալման դեմ մարտնչելու համար, նշանաբան ունենալով հայ եկեղեցու դավանական դիրքերի և ծիսական կարգերի պաշտպանությունն ու անխախտ պահպանումը: Չուղեթացաբար նա պիտի պայքարեր նաև Միջագետքի հայության մեջ ասորական եկեղեցու ազդեցությանը մուտք գործած մի քանի խորթ գաղափարների դեմ, որոնք կարող էին անուղղակիորեն զուգորդվել Կիլիկիայում ծավալված քաղկեդոնիկ շարժման հետ՝ ի վնաս ազգային ճակատի միասնության և դիմադրողականության: Այս խնդիրների իրագործման մեջ դիտվում էր ազգային ինքնությունության և պետության ամրապնդման ու գոյատևման հարցը, իսկ իր այսպիսի նշանակությանը՝ «Արմատ Հաւատոյ» ժողովածուն պատկանում է Կիլիկյան Հայաստանի եկեղեցական ու քաղաքական պատմության թանկագին աղբյուրների շարքին:

«Արմատ հաւատոյ»-ն իր կառուցվածքով նման է հայկական հայունի «Կնիք հաւատոյ» ժողովածուին¹, որը կազմված էր է դարի սկզբներին, և Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» գրքին, որն ավելի վաղ՝ Ե դարի վերջերին հունարենից էր թարգմանվել²: Այս երկու ժողովածուների նման՝ «Արմատ հաւատոյ»-ում ևս առանձին գլուխներ էին հատկացված վեճի և տարակարծության առարկա խնդիրներին և այդ գլուխների մեջ ամփոփված էին հեղինակավոր աղբյուրներից բերված այն բոլոր վկայությունները, որոնք կարող էին որպես զենք օգտագործվել՝ հակառակորդների հետ վիճաբանելիս: «Արմատ հաւատոյ»-ն հիշյալ ժողովածուներից իր բովանդակությամբ տարբերվում էր միայն նրանով, որ մինչ վերջիններս լոկ դավանական խնդիրներ էին ընդգրկում, «Արմատ հաւատոյ»-ն ընդգրկում էր թե՛ դավանական, թե՛ ծիսական հարցեր:

«Արմատ հաւատոյ»-ի ընդհանուր նկարագրությունը մենք տվել ենք Վարդան Այգեկցուն նվիրած մեր ուսումնասիրության մեջ և ներկայացրել այն հիմնական խնդիրները, որ նա ընդգրկում է³: Բայց դեռ մնում են լրացուցիչ

¹ «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մտոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ: Հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի», Լեւոնաձի, 1914: Հրատարակիչը Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանն է:

² «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանալայն ի ժողովոյն Քաղկեդոնի: Ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ Ծ. վարդապետի եւ Երուանդ վարդապետի», Լեւոնաձի, 1908: Հրատարակիչները Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանն ու Երվանդ վրդ. Տեր-Մինասյանն են:

³ Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ», Վենետիկ, 1939: Արտատպված է Բազմավեպ ամսագրի 1968 թ. հատորից:

բազմաթիվ հարցեր, որոնք պետք է քննվեն հետզհետե: Այդպիսիներից են ժողովածուի կրկնակ խմբագրությունների հարցը, նրա հեղինակի ինքնության հարցը, բնագրական կազմի վերակառուցման հարցը, աղբյուրների հարցը, բնագրաբանական հարցեր և այլն: Ներկա հոդվածը նվիրում ենք այդ հարցերից մի-երկուսին:

* * *

«Արմատ հաւատոյ»-ի մեզ ծանոթ ձեռագրերի ուսումնասիրությամբ արդեն հմարավոր էր եղել պարզել, որ գոյություն ունեն ձեռագրերի հիմնական երկու խմբեր, որոնք և կազմում են նրա երկու ուրույն խմբագրությունները՝ ընդարձակ և համառոտ: Չենք խոսում ենթախմբերի մասին, որոնց ճշտումը կունենայ միայն բնագրաքննական ճշանակություն, որը դուրս է ներկա հոդվածի ծրագրից:

Ընդարձակ խմբագրությունը, որը բաղկացած է 16 գլուխներից և ունի լիակատար հորինվածք, զուրկ է ընդհանուր խորագրից, որովհետև, ինչպես երևում է ձեռագիր օրինակներից, բնագրի արտագրման ժամանակ գործնական մոլորակներով, — լույս դավանական և վիճաբանական մասերի ընտրությամբ, — դուրս են թողնվել նրա Ա և Բ գլուխները, որոնք առաջաբաններ են, և դրա հետևանքով դուրս է ընկել նաև գրքի ընդհանուր խորագիրը. իսկ մնացած դավանական ու վիճաբանական գլուխների համար կազմվել է մի նոր խորագիր՝ «Համառոտ հաւաքումն սրբոց վարդապետաց՝ յաղագս դամոսեան ամենասուրբ Երրորդութեանն ընդդէմ հերձուածողաց հակաճատութեանք»: Այս խմբագրութիւնն ունի հիշատակագրություններ և հիշատակարան:

Այսպիսի տեսք ունեն ծանոթ բոլոր ձեռագրերն էլ. բայց Երևանի Պետ. Մատենադարանի № 3295 ձեռագիր օրինակում ընդօրինակողը, ի տարբերություն մյուսների, միաժամանակ, մի այլ տեղից լրացում կատարելով, նրա սկզբին տեղադրել է նաև Ա և Բ գլուխները՝ դարձեալ առանց ընդհանուր խորագրի⁴:

Համառոտ խմբագրությունը նույնպես բեռնաթափված է առաջաբաններից, ենթարկված է որոշ կրճատումների և նյութերի ամտեղի տեղափոխումների, չունի ընդարձակի լրիվ և ճշգրիտ գլխաբաժանումները, ինչպես նաև հիշատակագրություններ և հիշատակարան: Նրանում պահպանվել է գրքի ընդհանուր խորագիրը, որ է՝ «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ», բայց դա «և» շաղկապով միաձուլվել է բացատրական այն տողերի հետ, որոնք բնագրի սկզբի մասերի կրճատումից հետո շարադրված են եղել որպես խորագիր՝ անմիջապես սկսվող դավանաբանական նյութերի համար, և դրանով ստացել այսպիսի տեսք. «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, եւ պատասխանիք ընդդէմ Արիւմոսացն (կամ Նեստորականացն), զի ասեն հերետիկոսքն եթէ ոչ միացաւ աստուածութիւնն ընդ մարմնոյն, այլ որիշ որիշ խոստովանին զաստուածութիւնն ի մարմնոյն, զոր քաւ լիցի ուղղափառաց զմտաւ ածել այսպիսի ինչ, այլ արիաբար վկայութիւն բերել պարտ է զմար-

⁴ ձեռագրերի մասին տես մեր հիշյալ հրատարակությունը, էջ 7—8: Մեր ուշադրությունից փրկել էր Երուսաղեմի հայոց մատենադարանի № 2331 ձեռագիրը (2-րդ մասի էջ 261—532), որի մասին խոսում է Նորայր Ծովականը (Պողոսյան), «Վարդան վարդապետի Հատարամտը», Միոն, 1960, էջ. 104—106:

գարեականքն, զանտարանականն եւ զառաքելականն, եւ համարձակութեամբ տալ պատասխանի ընդդէմ երկաթանիցն»⁵:

Անցյալում ոչ-հայ բանասերներից Պ. Մարտենը⁶ և Հ. Յորդանը⁷, որոնք որոշ նյութերի համար օգտվել էին «Արմատ հաւատոյ»-ի համատոտ խմբագրութեանը պատկանող Փարիզյան № 85 (=այժմյան № 153) ձեռագիր օրինակից, գաղափար չէին ունեցել նրա կրկին խմբագրությունների գոյության մասին: Առաջին մասնագետը, որի ուշադրությունն էր գրավել այդ իրողությունը, եղել էր Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը: Նրան հայտնի էր եղել Էջմիածնի Մատենադարանի («Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»), № 2080 ձեռագիր օրինակը («Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»), իսկ որպէս «այդ հաւաքածոյի բուն աղբիւրը», «աւելի հին ձևով» կամ «աւելի լիւ ու աւելի հարուստ վկայութիւններով», նա մատնացույց էր արել նույն մատենադարանի № 512 ձեռագիր օրինակը («Համատաւ հաւաքումն...»)⁸:

Ուրեմն՝ Տեր-Մկրտչյանը երկու բնագրերից մեկը (համատոտը) համարում էր ծագած մյուսից (ընդարձակից), բայց այդպիսի կարծիքի հանգելու համար նա փաստական տվյալներ չուներ: Նրա միակ հիմքն այն տրամաբանականն էր, թէ «աւելի լի ու աւելի հարուստ վկայութիւններով» և տեղտեղ «անհամեմատ ընդարձակ» բնագիրը պիտի «բուն աղբիւրը» եղած լինէր «բաականաչափ կրճատուած մի օրինակի»⁹:

Սակայն այդ երկու միավորների ուշադիր համեմատությունը ցույց է տալիս, որ նրանց հարաբերությունն այդպիսին չէ: Նրանք ոչ թե մեկը մյուսից ծագած բնագրեր են, այլ միևնույն բնագիրն են՝ միևնույն աղբյուրից կատարված և առավել կամ նվազ չափով քաղվածային բնույթ կրող արտագրումներով: Դրանում համոզվելու համար համեմատության դնենք ընդարձակ և համատոտ բնագրերում հաճախարարւաւ ընդգրկված երկու նյութեր: Ընդարձակ բնագիրը նշում ենք A տառանշանով (=Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295), իսկ համատոտը՝ B տառանշանով (=նույն մատ. ձեռ. № 2080):

Փիլոքսենոս Նաքովկացու անվամբ եղած մի վկայություն, որն A-ում ներկայանում է մեկ հատվածով, B-ում իր համապատասխանն ունի երկու հատվածով և աւելի ընդարձակ է:

⁵ Այստեղ արիանոս և Մեստորական անունների տակ պետք է հասկանալ քաղկեդոնական, որովհետև ժողովածուն հակաքաղկեդոնական է: Պետք է ասել, որ, դեռ վաղ ժամանակներից սկսած, հայ տեսաբանները, քաղկեդոնական Բյուզանդիոնի քաղաքական ազդեցության դեմ որպէս դիմագրավելու միջոց, ընդհանրապէս չէին ուզում տարբերություն տեսնել հիշյալ երկու հասկացությունների և քաղկեդոնականության միջև՝ վերջինս համարելով նրանց հարուցած երկվության գաղափարների հաստատումը:

«Արմատ հաւատոյ»-ի համատոտ խմբագրության ձեռագրերի մասին տես մեր հիշյալ հրատարակությունը, էջ 8—9: Այս խմբագրությունից է նաև Երուսաղեմի № 538 ձեռագիրը (էջ 9—96), որը վերջից թերի է, հմմտ. Նորայր եպս. Պողոսյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. Բ, Երուսաղեմ, 1907, էջ 543—544:

⁶ J. P. Paulinus Martinus, „Analecta sacra patrum antenicaenorum“, հետևյալ հրատ. մեջ. J. B. Pitra, „Analecta sacra spicilegio Solesmensi parata“, t. IV, Paris, 1883.

⁷ H. Jordan, „Armenische Irenaeusfragmente“, Leipzig, 1913.

⁸ Տես «Կնիք հաւատոյ»-ի ներածությունը, էջ CX—CXI:

⁹ Ամդ:

A ԲՆԱԳԻՐ

Փիլաքսոնի եպիսկոպոսի Արքեքսաղաքի.

Վասն զի սիրէր [զ]պատկեր իւր՝ նմանեցաւ նմա. եւ վասն զի անսկիզբն է՝ ոչ դարձաւ ի մարմին զի անապական է. ոչ ի ծնունդն երկուս եւ ոչ ի խաչելն երկուս¹⁰:

B ԲՆԱԳԻՐ

Փիլաքսոնի եպիսկոպոսի ասացեալ.

Վասն զի սիրէր զպատկեր իւր՝ նմանեցաւ նմա. վասն զի անսկիզբն էր՝ ոչ դարձաւ ի մարմինն զի անապական էր:

Նորին՝ յետ սակաւոց.

Մարմնացաւ ի սրբոյ Կուսէն Բանն Աստուած անփոփոխելի, եւ էտ ի նմանէ մարմին անապական եւ հոգի առանց մեղաց. ոչ ի ծնանելն երկուս եւ ոչ ի խաչելն երկուս¹¹:

Պարզ է, որ B բնագիրն ամբողջական տեսք ունի, մինչ A բնագիրը ներկայացնում է երկու հատվածների միացում ու ձուլում՝ կրճատմամբ հանդերձ: Կասկած չկա այդ մասին, որովհետև B բնագրի պահած ձևով նույն հատվածներն օգտագործել է նաև, Ը դարի սկզբներին, Ստեփանոս Սյունեցին՝ իր «Վասն անապականության մարմնոյն» աշխատության մեջ: Ահա այդ հատվածները.

Դարձեալ Փիլիքսիանոս ասէ.

Վասն զի սիրէր զպատկեր իւր՝ նմանեցաւ նմա, եւ վասն զի անապականելի է՝ ոչ փոխեցաւ:

Նորին.

Մարմնացաւ ի սրբոյ Կուսէն երկրորդ Ադամ, նոր մարդ, որ ի վեր է քան զապականութիւն, եւ էտ մարմին անապական, հոգի առանց մեղաց¹²:

Ուրեմն՝ այստեղ նախնականությունը պատկանում է B-ին:

Նույնպիսի երևույթ ենք տեսնում նաև Պրոկլ Կ. Պոլսեցու անվամբ քերական հետևյալ տողերի մեջ.

A ԲՆԱԳԻՐ

Նորին՝ ընդդէմ Նատորի.

Եթէ Աստուծոյ անարգութիւն է յարգանդն գալ, ապա եւ հրեշտակաց անարգութիւն է մարդոյ սպասաւորել. բայց արդէակն ըստ բնութեան անախտակիր՝ եղել ի ձեռն գթոյ յոքնախտակիր¹³:

B ԲՆԱԳԻՐ

Նորին՝ ընդդէմ Նատորի.

Թէ անարգութիւն է Աստուծոյ յարգանդն գալ, ապա եւ հրեշտակաց անարգութիւն է մարդոյ սպասաւորել:

Նորին.

Էական ըստ բնութեան անախտակիր՝ եղել ի ձեռն գթոյ յոքնախտակիր¹⁴:

¹⁰ Ձեռ. № 3295, էջ 354ա:

¹¹ Ձեռ. № 2080, էջ 35բ:

¹² Տե՛ս Աբարատ, 1902, էջ 393—394: Այստեղ, ի հարկե, չենք ուզում ասել, թե հատվածների աղբյուրը Ստեփանոս Սյունեցին է, այլ պարզապէս ապացուցել, որ B բնագրում եղած վիճակն է նախնականը:

¹³ Ձեռ. № 3295, էջ 352բ:

¹⁴ Ձեռ. № 2080, էջ 33բ—34ա:

Այստեղ B քնագիրը թեև երկու բառ («բայց արդ») պակաս ունի քան A քնագիրը, բայց նախնականությունը դարձյալ B-ին է պատկանում, որովհետև ոչ թե այդ երկու բառերի կրճատմամբ է կազմվել B-ն, այլ, ընդհակառակն, դրանց ավելացմամբ է կազմվել A-ն: Դա ապացուցվում է Պրոկլից բերված վկայության բուն աղբյուրով, որ է Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» գիրքը (թարգմանություն Ե դարի), ուր բացակայում են «բայց արդ» բառերը՝ հաստատելով B-ում պահված վիճակի հարազատությունը: Ահա այդ հատվածը.

Երանելոյ Պրոկլի...

Եթ՝ Աստուծոյ անարգութիւն յարգանդն
գալ՝ ե՛ր հրեշտակաց (ան)արգութիւն մար-
դոյ սպասաւորել. էական ըստ բնութեան ան-
սխալակիր՝ եղև ի ձեռն գթոյ յոքնաստա-
կիր¹⁵:

Այս օրինակները բավական են համոզվելու համար, որ B-ն ոչ մի կախում չունի A-ից և ամենևին էլ նրանից «կրճատուած մի օրինակ» չէ:

Այն մասին, թե A-ն էլ իր հերթին կախման մեջ չէ B-ից՝ կարելի է րեւել շատ ավելի օրինակներ, որովհետև B-ն իր աղբյուրից արտագրվելիս ենթարկվել է ավելի զգալի կրճատումների: Նրանից ոչ միայն դուրս է մնացել երբեմն այս կամ այն հեղինակի միակ հատվածը, ինչպես, օրինակ, «Ունորայ Հոռմայ հայրապետի»¹⁶ կամ «Մեծին Եղիառոնի»¹⁷ վկայությունները, այլև, համեմատած A քնագրի հետ, այնտեղ անտեսվել են բազմաթիվ ուրիշ մասեր, և դա է, որ Տեր-Մկրտչյանին ձերշնչել էր այն կարծիքը, թե B-ն ծագում է A-ից:

Անառարկելի է, որ A-ն և B-ն ուղղակի կապ չունեն իրար հետ, այլ, անկախ իրարից, ծագել են նախօրինակից (հեղինակային օրինակից)՝ կրելով որոշ այլալուծման: Այդ մասին սովելի հանգամանորեն կանոնադառնա՞նք հետագայում՝ քննարկական հարցեր քննելիս: Սակայն, համեմայն դեպս, A քնագիրը շատ մոտ է նախօրինակին և հիմնականում պահել է նրա կերպարանքը, մինչ B-ն կրել է զգալի փոփոխություններ:

Մեր օրերում ամերիկացի հայագետ Ռ. Թոմսոնը ևս զբաղվել է «Արմատ հաւատոյ»-ի խմբագրությունների հարցով, բայց նրա եզրակացությունները չեն համապատասխանում այն արդյունքներին, որոնց հանգել ենք մենք: Չեն համապատասխանում նաև, այս կետում, Տեր-Մկրտչյանի վերոհիշյալ կարծիքին, կարծիք, որը, համեմայն դեպս, ճիշտ էր պատկերացրել ընդարձակ և համառոտ խմբագրությունների տարբերությունը՝ Էջմիածնի Մատենադարանի №№ 512 և 2080 ձեռագիր օրինակների հիման վրա:

Թոմսոնի գնահատմամբ մեկ խումբ են կազմում Երևանի №№ 7255, 2080, 1982 և 512, Երուսաղեմի № 533, Փարիզի № 153, Վատիկանի № 31 և Վենետիկի № 286 ձեռագրերը. և այս խումբն է, որ նա անվանում է համառոտ խմբագրություն. իսկ միակ ձեռագիրը, որը, նրա կարծիքով, ներկայացուցիչն է ընդարձակ խմբագրության, Երուսաղեմի № 2331-ն է¹⁸:

¹⁵ Տե՛ս՝ «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանափակ ի ծողովոյն Քաղկեդոնի», էջ 88:

¹⁶ Ձեռ. № 8295, էջ 343բ:

¹⁷ Անդ, էջ 354բ:

¹⁸ R. W. Thomson, «The shorter recension of the Root of Faith», *Revue des Etudes Arméniennes*, nouv. série, t. V, Paris, 1968, p. 249.

Հասկանալի է, որ Թոմսոնի այս գնահատման հիմքը կազմում է № 2331 ձեռագիրը, որը, եթե դատենք նրա մասին Ծովականի տված ոչ լրիվ նկարագրությունից¹⁹, այն տպավորությունն է թողնում, թե շատ ավելի ծավալուն բնագիր է, քան մյուս ծանոթ օրինակները, ուստի և այդ միակ ձեռագիրը համարելով «Արմատ հաատոյ»-ի ընդարձակ խմբագրության ներկայացուցիչ, Թոմսոնը մյուս բոլոր օրինակները միասնաբար անվանել է համառոտ խմբագրություն:

Սակայն խնդիրն այն է, որ № 2331 օրինակն այդպիսին չէ: Եթե Թոմսոնն անձամբ ծանոթ եղած լիներ այդ ձեռագրին, կհամոզվեր, որ նա ամենևին էլ մի նոր խմբագրություն չի ներկայացնում, այլ պարզապես Երևանի №№ 7255, 1982, 512 և սրանց լավագույն ներկայացուցիչ 3295-ի խմբին պատկանող օրինակ է՝ լրիվ ունենալով բնագրի Ա և Բ գլուխները: Ժիշտ է, որ մենք ևս չենք տեսել Երուսաղեմի այդ ձեռագիրը, բայց Ծովականի կողմից տրված ոչ լրիվ նկարագրությունն էլ մեզ հնարավորություն տվեց հաստատելու, որ իր ամբողջ կերպարանքով այն համանման է Երևանի № 3295 լիակատար օրինակին, որի մասին խոսեցինք վերևում:

Արդ՝ ըստ այսմ և ըստ այն դասակարգման, որ կատարել էինք Վարդան Այգեկցուն նվիրած մեր ուսումնասիրության մեջ, «Արմատ հաատոյ»-ի ընդարձակ խմբագրությունը ներկայացնող օրինակներն են՝ Երևանի №№ 3295, 512, 1982, 4425, 6567 և 7255 ձեռագրերը, Մարսելյի Միրզայան ձեռագիրը և Երուսաղեմի № 2331-ը. իսկ համառոտ խմբագրությունը ներկայացնող օրինակներն են՝ Երևանի №№ 2080, 1337 և 4063 ձեռագրերը, ինչպես և Փարիզի, Արմաշի, Վենետիկի ու Հռոմի ձեռագրերը, և Երուսաղեմի № 533-ը²⁰:

Ռ. Թոմսոնն, անտեսելով ձեռագրական այս երկու խմբերի միջև եղած ծավալային ու կառուցվածային տարբերությունները, իր կազմած համադրական ցուցակի միջոցով աշխատել է հաշտեցնել № 7255-ը, որը ընդարձակ խմբագրությանը պատկանող օրինակ է, ուրիշ հինգ օրինակների հետ, որոնք համառոտ խմբագրությանն են պատկանում²¹:

* * *

«Արմատ հաատոյ»-ի միայն ընդարձակ խմբագրության մեջ է, որ իրեն հիշատակում է հեղինակը՝ «Վարդան» անունով, առանց մականվան, իսկ համառոտի մեջ այդպիսի հիշատակություն չկա: Գրքի Ա գլխում նա գրում է. «Արդ ես ողորմելիս՝ Վարդան վարդապետս եւ մուստացեալս ի գործաւնութենէ քարեաց»²². ապա հայտնելով, որ գրքի շարադրումն ավարտել է «ի թուականիս Հայոց ՈԾ եւ Դ-ին (=1205 թ.), ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի, եւ ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի Յրոտրիսեանց եւ Զաքարիայի յալթող հգաւրապետութեան ի կողմն հիւսիսոյ»²³, ավելացնում է. «Յիշեալիք անմոռաց զեղկելի զՎարդան վարդապետս» և այլն²⁴: Թ՝ գլխի վերջում՝ հավատո դավանություն շարադրելու առթիվ նորից գրում է. «Եւ ես ողորմելիս Վարդան որ հաւաքեցի զայս աստուածային և լուսաւիալ մար-

¹⁹ Նորայր Ծովական, «Վարդան վարդապետի Հաատարմատը», էջ 104—106:

²⁰ Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին...», էջ 7—9:

²¹ R. W. Thomson, «The shorter recension of the Root of Faith», p. 251-260.

²² Ձեռ. № 3295, էջ 88ա (հմտ. Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին...», էջ 9):

²³ Ձեռ. № 3295, էջ 88ա (հմտ. Հ. Ս. Անասյան, էջ 10):

²⁴ Ձեռ. № 3295, էջ 88ա (հմտ. Հ. Ս. Անասյան, էջ 10):

գարիտու հաստոյ» և այլն²⁵։ Իսկ գրքի վերջում՝ նորից. «Եւ է սա երկուտա-
սան գիրք գրեալ եւ փոխեալ [յ]ատաշին օրինակէն ձեռամբ մեղապարտիս
Վարդանայ...։ Եւ գրեցաւ սա ի Պարվաան, [ի] ՌԾԸ մերոյ թուիս (=1209
թ.), ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սրբոյ Նշանիս, յատաշնորդու-
թեան տեսուն Մանուկի սրբաանեալ եպիսկոպոսի»²⁶։

Ո՛վ պիտի լիներ այս Վարդանը։

Այս հարցը նույնպէս հետաքրքրել էր Տեր-Մկրտչյանին։ Նա զբաղւելով
ժ.Գ./Ժ.Դ. դդ. ապրած Վարդանների ինքնության խնդրով և նշելով, որ այդ
խնդիրը դեռ վերջնական արդյունքի չի հասնում²⁷, կանգ էր առել երկու
ենթադրությունների վրա.

1. «Հաղբատ և Սանահին վանքերի շրջանում՝ Ծնորհալու ժամանակա-
կից Վարդան Հաղբատացոց կրտսեր և Վարդան Արևելցոց ու Վարդան Այ-
գեկցոց երեց ժամանակով, մի ուրիշ Վարդան ևս եղել է, որ զբաղուել է աւե-
լի գանազան կարգի ժողովածոներ կազմելով՝ դաւանաբանական, մեկնա-
բանական, տօներ ու եկեղեցական կարգեր բացատրող բովանդակութեամբ»,
որը և կարող է կազմած լինել տվյալ ժողովածուն՝ «Համատաւտ հաւա-
քումն»²⁸։

2. Ծնորհալու ժամանակակից Վարդան Հաղբատացին գուցէ չի մահա-
ցել 1195 թ., ինչպէս ցույց է տալիս նրա աշակերտ Խաչատրի հիշատակա-
րանը («Հանդէս Ամսօրեայ», 1908, էջ 234), որը կարող է սխալ լինել, և հա-
վանաբար նա «կենդանի էր յաջորդ դարի սկզբին, և ինքն է, որ Կիլիկիա
ճանապարհորդելով՝ դեգերել և մնացել է այնտեղ մինչև Գրիգոր Տղայի օրե-
րը, ...յետոյ կրկին Հաղբատ եկել, Լօւոյ ժողովին մասնակցել, Սանահին վա-
նահայր եղել» և կազմել է «Համատաւտ հաւաքումն» ժողովածուն²⁹։

Այս ենթադրությունները երկուսն էլ զուրկ էին փաստական հիմքերից,
ուստի և նրանց շրջանակում երկար հետազոտություն կատարելուց հետո
Տեր-Մկրտչյանը հանգել էր այն հատտատ համոզման, թէ ժողովածուի հե-
ղինակը պիտի լիներ «Ծնորհալու ժամանակակից Վարդան Հաղբատացոց
կրտսեր և Վարդան Արևելցոց ու Վարդան Այգեկցոց երեց ժամանակով
մի ուրիշ Վարդան»³⁰, այլ խոսքով՝ մի անծանոթ Վարդան։

Այս անծանոթ Վարդանի ինքնությունն ի հայտ բերելու ուղղությամբ մեր
հետազոտությունները հասան դրական արդյունքի։

Նախ, մատենագիտական աշխատանքների ընթացքում, 1950-ական
թվականներին, արդեն վերջնականապէս պարզել էինք, որ «Արմատ հաւա-
տոյ»-ի հեղինակն ուրիշ մեկը չէր, եթէ ոչ որպէս առակագիր հայտնի եղող
Վարդան Այգեկցին, որը կոչվում է նաև Մարաթացի, և անվարան կերպով
այդ փաստը բազմաթիվ տեղերում գրանցել էինք 1959 թ. լույս տեսած մեր
«Հայկական մատենագիտություն» աշխատության Ա հատորում³¹։ Բայց, քնա-
կանաբար, կողմնակի առիթներով եղած այդ գրանցումների ժամանակ տեղը

²⁵ Ձեռ. № 8295, էջ 366ր։

²⁶ Անդ, էջ 383ա (հմտ. Հ. Ս. Ամասյան, «Վարդան Այգեկցին...», էջ 7)։

²⁷ Տես «Կնիք հատաւոյ»-ի ներածությունը, էջ CXI—CXVI։

²⁸ Անդ, էջ CXIII։

²⁹ Անդ, էջ CXV։

³⁰ Անդ, էջ CXIII։

³¹ Հ. Ս. Ամասյան, «Հայկական մատենագիտություն», հտ. Ա, Երևան, 1959, էջ 78 տող
27—35, էջ 358 տ. 14-ից մինչև էջ 354 տ. 23, էջ 487 տ. 18—35, էջ 490 տ. 42-ից մինչև
էջ 491 տ. 1, էջ 782 տ. 6-ից մինչև էջ 788 տ. 1, էջ 1034 տ. 26—31, էջ 1035 տ. 6—12,
էջ 1043 տ. 25—33։

չէր միաժամանակ ներկայացնել նաև մեր փաստարկումը, թե ի՞նչ հիմունքներով է, որ Այգեկցուն Էինք տալիս «Արմատ հաւատոյ»-ի հեղինակությունը, ուստի և այդ գործը թողել էինք ուրիշ առիթի: Սակայն քիչ հետո, 1960 թ., Նորայր Ծովականը (Պողարյան) փորձել էր գտնել այն կապը, որը պիտի միացներ Վարդան Այգեկցու անունը «Արմատ հաւատոյ» ժողովածուի հետ:

Ծովականը «Արմատ հաւատոյ»-ի հիշատակարանային մասերի ինչ-ինչ հատվածներ բերելով նրա այն օրինակից, որը գտնվում է Երուսաղեմի հայկական մատենադարանում, մեզ ներկայացնում էր հետևյալ պատրաստի արդյունքը.

«Համեմատելով վերոյիշեալ յիշատակարաններու ոճը, ոգին, և մասնաշտտով բացատրությունները՝ Վարդան Այգեկցիի ծանօթ ալ գրութներուն հետ, կը հասնինք այն եզրակացութեան թէ ներկայ «Հաւատարմատ» հաւաքածոն կազմողը Վարդան վարդապետ Այգեկցին է»³²:

Բայց Ծովականն այդ հոդվածում նախ և առաջ ոչ մի տող ու նույնիսկ մի բառ չէր բերել Վարդան Այգեկցու ծանօթ գրվածքներից և համեմատել «Արմատ հաւատոյ»-ի հետ՝ այդ եզրակացությունը հաստատելու համար, և երկրորդ՝ առանց այն էլ այդպիսի ոչ-փաստական հիմունքներով (լեզվական ոճ ու ոգի) կարելի չէր այդ հարցը համարել լուծված ու հիմնավորված. այդ պատճառով էլ Ռ. Թոմսոնը, ծանոթ լինելով հանդերձ Ծովականի հոդվածին, բավարարվում էր «Արմատ հաւատոյ»-ի հեղինակին անվանելով՝ «ոմն Վարդան» (a certain Vardan)³³.

Այս հարցի լուծման համար մենք ունենք փաստական տվյալներ:

Երևանի Պետ. Մատենադարանի № 8356 ձեռագիրը, որ նկարագրել ենք մանրամասնորեն³⁴, շատ թանկագին նյութեր է պարունակում Վարդան Այգեկցու կյանքի և գրական գործունեության վերաբերյալ, ընդ որում նաև՝ «Արմատ հաւատոյ»-ի պատմության համար:

№ 8356 ձեռագիրը տարբեր նյութերի ժողովածու է, բաղկացած՝ 230 թերթերից: Ընդօրինակված է 1322 թ. Ստեփանոս կամ Փանիկ գրչի ձեռքով՝ Կամրիկ անապատում: Նրա սկզբի մասում, մինչև 157ա էջը, զետեղված են Վարդան Այգեկցու մի շարք հայտնի և անծանոթ գրվածքները, թվով 23, որոնք արտագրված են ուղղակի հեղինակի ինքնագիր մատյանից: Այդ մասին գրիչը հիշատակագրում է վերջում. «Յիշատակ լիցի սա Ստեփանոսի և ծնողաց իւրոց: Զայս ի Վարդանայ վդ. ձեռացն ի գրածնէն եմ գրել եւ Քրիստոսի փառք յախտե[անն]»³⁵:

Թե այս Վարդանը, որի ինքնագիր մատյանից են արտագրվել իր գործերը, իրոք Այգեկցին է, հավաստվում է Ստեփանոս գրչի երկու գլխավոր հիշատակարաններով. «Փառք...: Որ արժանի արար զանարժան ծառայս իր կատարել զգիր քարոզութեանն սուրբ վարդապետին Վարդանայ որ ի Մարաթոյ, ի թուականութեանս Հայոց 2ՀԱ (=1322 թ.), ի թագաւորութեանս Հայոց Կեոնի եւ յոյժ մանկագոյն պատանեկի...»³⁶ և «Արհնութիւն...: Որ արժանի արար զողորմելի մեղաւորս զՍտեփանոս տանել ի կատարումն զաստուածնէն գիրս սուրբ վարդապետին Վարդանայ որ ի Մարաթոյ»³⁷:

³² Նորայր Ծովական, «Վարդան վարդապետի Հաւատարմատը», էջ 106:

³³ R. W. Thomson, «The shorter recension of the Root of Faith», p. 249.

³⁴ Է. Ս. Անապան, «Վարդան Այգեկցին...», էջ 10—14:

³⁵ Հմմտ. անդ, էջ 14:

³⁶ Հմմտ. անդ, էջ 12:

³⁷ Հմմտ. անդ, էջ 18:

Այս ձեռագրում մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ ուշադրություն են գրավում Այգեկցու գործերից մի քանիսը, որոնք, համապատասխան խորագրերի տակ, ծիսական տարբեր հարցերի վերաբերյալ վկայություններ են պարունակում մատենագրական աղբյուրներից: Դրանք են³⁸

— Ցաստուածաշունչ գրոց վկայութիւնք վասն ծննդեանն եւ մկրտութեանն Քրիստոսի, զի պարտ է ի միտմ աւուր տաւնել ի վեցն յունուարի:

— Կիրդի Աղեքսանդրու հայրապետին ի Թէոդոսի ի թղթէն, զի պարտ է ուտել ճրագալուցին իրիկունն:

— Վկայութիւնք ի սուրբ գրոց ընդդէմ մոցա որք ասեն թէ Քրիստոս ոչ եկեր զգառնն ի հինգշաբաթոջ երեկոյին:

— Վկայութիւնք յաստուածաշունչ գրոց, զի պարտ է գտորք պատարագն առնել անխմոր եւ անջուր:

— Ցաստուածաշունչ գրոց վկայութիւնք, զի պարտ է ասել զԽաչեցարն [յ]ամենայն աւուր ի դէմ Որդոյ:

— Վկայութիւնք յաստուածաշունչ գրոց՝ վասն ուրբաթագելի զի սուտ [է] յամենայնի:

— Վասն զատկի մատաղի, զի քարի է:

Վարդան Այգեկցին այս վկայությունները հավաքել է որպես վիճարանական նյութ՝ հակառակորդների դեմ օգտագործման նպատակով: Նրանցից առաջինի տակ նա գրել է հետևյալը, որը վերաբերում է նաև մյուս վեցին.

«Ո՛վ որդեակք, զայս զոր գրեցի եւ զոր գրելոց եմ, յայլոց ազգաց ի սուրբ հայրապետացն բանիցն է, զոր վկայեն մեր սուրբ եկեղեցոյս կարգաց եւ հաւատոյ: Իսկ թէպէտ եւ ունիմ ի Հայոց հայրապետացն եւ ի վարդապետացն բազում եւ գեղեցիկ վկայութիւնք զոր գրեալ են ընդդէմ ամենայն ազգաց, քայց աստ ոչ գրեմ ի մերոցն, զի մոցա՝ վկայութիւն է պարծանք մեր եկեղեցոյս. եւ սակաւ սակաւ գրեմ, զի որ սակաւուն չհաւատայ, նա եւ ոչ բազմացն չհաւատայ»³⁹:

Արդ՝ վկայությունների այս յոթ խմբերը, որոնք Այգեկցու ինքնագիր մատյանից են ընդօրինակվել, նորանոր լրացումներով և հենց մույն խորագրերով էլ գետնովել են «Արմատ հաւատոյ»-ի մեջ և կազմել նրա վերջին՝ Ժ—ԺԶ գլուխները (ըստ ընդարձակ խմբագրության): Այս փաստը՝ անհերքելի ապացույց է, որ «Արմատ հաւատոյ»-ում իրեն «Վարդան» անվանող հեղինակը № 8356 ձեռագրում եղած նյութերի հեղինակ Վարդան Այգեկցին է: Այս յոթ խմբերը պատկանում են «Արմատ հաւատոյ»-ի համար նյութերի հավաքման շրջանին (մոտավ. 1205 թ.), որովհետև տակավին չունեն այն լրիվությունը, որին նրանք հասել էին «Արմատ հաւատոյ»-ի կազմի մեջ մտնելիս:

Վարդան Այգեկցու հեղինակությունը հաստատող այս իրողությունից հետո կարելի է ավելացնել նաև հետևյալը: Հայ արքայազն Պաղտին իշխանի մի նամակից, որն ուղղված է Վարդան Այգեկցուն, տեղեկանում ենք, որ վերջինս մի օրինակ ուղարկել էր նրան իր գրքից և այդ առթիվ իշխանն իր գոհունակությունը հայտնելով՝ գրում էր հետևյալ տողերը. «Եւ եւս ուրախացաք վասն գրոցս՝ զոր առաքեցնր առ մեզ. զի արմատ է սա հաւատոյ եւ գործարան ամենաւարք Երրորդութեանն, որով լուսաւորեցաք հոգւով եւ մարմնով» և այլն⁴⁰:

(Ծառունակելի)

³⁸ Անդ, էջ 12—13, §§ 14—20:

³⁹ Անդ, էջ 12, § 14:

⁴⁰ Անդ, էջ 9: